# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N01/22

*Ք. Եղեգնաձոր* *<< 09>> մարտի 2022թ.*

Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի գլխավոր քարտուղար՝ Ա.Կարապետյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, /այսուհետ՝ Պետական մարմին/, մի կողմից, և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի համայնքապետարանը ի դեմս համայնքապետ՝ Դ.Հարությունյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, /այսուհետ՝ համայնքապետարան/, մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 1937-Ն որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով և ղեկավարվելով ՀՀ կառավարության 23.12.2021թ թիվ 2121 որոշմամբ, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Պետական մարմինը Համայնքապետարանին հատկացնում է 30000 /Երեսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ՝ այլ ընթացիկ դրամաշնորհ՝ որպես պետական անհատույց աջակցություն 2019 թվականի ձմեռային զարակոչի շրջանակներում այլընտրանքային աշխատանքային ծառայության ուղարկված այլընտրանքային աշխատանքային ծառայողների դրամական բավարարման նպատակով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգելու Համայնքապետարանի կողմից իրականացվող դրամաշնորհի օգտագործման նպատակաուղղվածությունը.
2.1.2. դրամաշնորհը նպատակային չօգտագործելու դեպքում Համայնքապետարանից պահանջելու վերադարձնել պետական բյուջե.

2.2. Համայնքապետարանն իրավունք ունի

2.2.1. հրաժարվել հատկացված դրամաշնորհից կամ դրամաշնորհի չափից՝ ներկայացնելով իրեն անհրաժեշտ գումարի չափը.

2.3. Պետական մարմինը պարտավոր է

2.3.1. անհրաժեշտության դեպքում աջակցել Համայնքապետարանին.
2.3.2. հատկացնել դրամաշնորհի միջոցները՝ ըստ սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող ժամանակացույցի.

2.4. Համայնքապետարանը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել սույն պայմանագրով սահմանված նպատակներով և չափաքանակներով.
2.4.2. իրականացնել դրամաշնորհի շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվառումը հաշվապահական հաշվառման վարման Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան.

2.4.3. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.
2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում և հետագայում ապահովել դրամաշնորհին վերաբերվող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

## 3. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո Պետական մարմինը սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը փոխանցում է համայնքապետարանի գանձապետական համապատասխան հաշվին՝ համաձայն հավելվածի:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել և լուծվել կողմերի համաձայնությամբ: Պայմանագրի փոփոխման կամ լուծման վերաբերյալ համաձայնությունը կնքվում է գրավոր:
4.2. Համայնքապետարանը իրավունք ունի ցանկացած ժամանակ մինչև դրամաշնոհի իրեն հանձնելը հրաժարվի դրանից: Այդ դեպքում պայմանագիրը համարվում է լուծված:
4.3. Պետական մարմինը կարող է ցանկացած ժամանակ ամբողջությամբ կամ մասամբ լուծել կամ փոփոխել սույն պայմանագիրը այդ մասին գրավոր ծանուցելով համայնքապետարանին, եթե պարզվի որ վերջինս չի կատարում սույն պայմանագրի որևէ պայման:

## 5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

## 7. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրը կազմված է երեք էջից, ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից մինչև 2022թվականի դեկտեմբերի 25-ը:
7.2. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, կազմված է երկու օրինակից, որոնցից յուրաքանչյուրն ունի հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:
7.3. Սույն պայմանագրի բոլոր լրացումներն ու փոփոխությունները կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կդառնա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.4. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

## *6. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ*

| ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ | ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ |
|---|---|
| ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան | Եղեգնաձորի համայնքապետարան |
| ք.Եղեգնաձոր, Շահումյան 5 | հասցե՝ ք.Եղեգնաձոր |
| Կենտրոնական գանձապետարան | Կենտրոնական գանձապետարան |
| Հ/Հ 900351000824 | Հ/Հ 900355101065 |
| ՀՎՀՀ 08907717 | ՀՎՀՀ 08903277 |
| Գլխավոր քարտուղար՝ Ա.Կարապետյան | Համայնքապետ՝ Դ.Հարությունյան |
| _____ | _____ |
| /Ստորագրություն/ | /Ստորագրություն/ |

Հավելված
<< 09 >> մարտի 2022թ.

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Դրամ

| Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը | | Բյուջետային ծախսերի տնտ. դասա-կարգման հոդվածը | Ընդամենը տարեկան | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2022թ.-ի պետական բյուջեից, ընդ որում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | I եռ. | | | II եռ. | | | III եռ. | | | IV եռ. | | |
| | | | | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր |
| h/h | 1 | 2 | 3=4:15 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| 1 | Այլ ընթացիկ դրամաշնորհ | 4639 | 30000 | | | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 |
| ***Ընդամենը*** | | | **30000** | **0** | **0** | **30000** | **30000** | **30000** | **30000** | **30000** | **30000** | **30000** | **30000** | **30000** | **30000** |

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան
ք.Եղեգնաձոր, Շահումյան 5
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900351000824
ՀՎՀՀ 08907717
Գլխավոր քարտուղար Ա.Կարապետյան

/Ստորագրություն/

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
Եղեգնաձորի համայնքապետարան
հասցե՝ ք.Եղեգնաձոր
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900355101065
ՀՎՀՀ 08903277
Համայնքապետ՝ Դ.Հարությունյան

/Ստորագրություն/